ցին Ճանապարհին սովածութիւնից եւ ցրտից։[1] Ի՞նչ աղբիւրներից է քաղել Պ. Եզեանը այդ տեղեկութիւնը, դժբախտաբար, չէ բացատրուած, բայց այդ թիւն անհաւանական է թւում մեզ, որովհետեւ 60.000 ընտանիքը նշանակում է 600.000 հոգի ու դժուար թէ Ճանապարհին, եթէ կոտորուած լինէին քաղցից ու ցրտից 40.000 ընտանիք, կամ 400.000 հոգի, այդ ահագին թուի մասին պատմագիրները լռէին։ Պէտք է ենթադրել, եւ այդ շատ հաւանական ենթադրութիւն է, որ որքան էլ Շահաբբասը միջոցներ գործ դրեց դատարկելու Արարատեան երկիրը Հայերից, բայց դարձեալ շատերին յաջողուեց մնալ իրանց տեղերում եւ շատերն էլ գուցէ Ճանապարհից փախչելով վերադարձան իրանց նախկին տեղերը, որովհետեւ Ադամ Օլէարիուս, որ այցելեց Շամախին 1636 թուին, յայտնում է, որ այդ քաղաքում շատ Հայեր կային, եպիսկոպոս ունէին եւ նկարագրում է Ջրօրհնեաց հանդէսը, որ Հայերը, Շամախու խանի հրամանով կատարեցին 1637 թուին յունվարի 6ին, գետի վրայ, Օլէարիուսի եւ Մոսկուայի դեսպան Ալէքսէյ Սավինովիչի ներկայութեամբ։ Նոյնպէս Շարդէն Թիֆլիսից սկսած մինչեւ Թավրէզ ամէն տեղ ցոյց է տալիս Հայերի մեծ բազմութիւն։

Ջրիբեցի Ստեփանոս քահանայ պատմաբանը, որ գրել է իր պատմութիւնը սկսած

---

1 Г. Я. Езовъ, Сношенія Петра Великаго съ армянскимъ народомъ, С. Петербургъ 1898, էջ V.